«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝«Հանդուրժողականությունը որպես մանկավարժի կոմպետենցիա»

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Ալեքսանյան
(Հրազդան քաղաքի Վ. Սարոյանի անվան № 11 հիմնական դպրոց)

ՀՐԱՉԴԱՆ 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ_____ 2
ԳԼՈՒԽ 1. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ _____5
1.1 ՛՛Հանդուրժողականություն՛՛ հասկացության էությունը և կառուցվածքը _____ 5
1.2. Հանդուրժողականության ձևավորումը որպես ապագա մանկավարժի մասնագիտական կոմպետենցիա _____ 12
1.3. Մանկավարժի հանդուրժողականության կոմպետենցիաները _____ 18
ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ _____ 20
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ _____ 25
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____ 29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեման արդիական է այնքանով, որ ներկայումս մանկավարժական գործընթացի արդյունավետության համար անհրաժեշտ և կարևոր պայման է հանդիսանում կրթական գործընթացում աշակերտների սոցիալական, անհատական, հոգեբանական տարբերությունների ընդունումը հասարակության մեջ, որտեղ սթրեսը և մրցակցությունը գերակայում են, անհրաժեշտ է ուղղակի դառնում համագործակցության ակտիվացումը հանդուրժողականության ուսուցչի կարևորագույն կոմպետենցիայի ձևավորման շնորհիվ: Ընդ որում, բացի «հանդուրժող ուսուցչի» մանկավարժական գործունեության հիմքում պետք է ընկած լինի, այլ ուսուցիչը այդ մշակույթը պետք է փոխանցի և դաստիարակի իր աշակերտներին հանդուրժողականության միջավայրում: Ուսուցչի հանդուրժողականության ձևավորումը որպես մասնագիտական կոմպետենցիայի կնպաստի նրա հուզական հավասարակշռության պահպանմանը:

Չափազանց կարևոր է մանկավարժական հանդուրժողականության սահմանների ընկալումը՝ գիտակցումը, այն կարգավորվում է օրենքներով, իրավական նորմերով, երբեմն նաև մշակութային ավանդույթներով: Ապագա ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության ձևավորումը, ենթադրում է այնպիսի մանկավարժական պայմանների ստեղծում բուհում, որը կնպաստի և կապահովի մասնագետի կայացմանը, նրա պատրաստվածությանը միանգամից բուհն ավարտելուց հետո իրականացնել մասնագիտական գործունեություն, զարգացնել ընդունակություններն ու զբաղվել հետագայում ինքնակատարելագործմամբ:

Վերջին տաս տարիների ընթացքում ՄԱԿ-ի «Հանդուրժողականության սկզբունքների վերաբերյալ հռչակագրում» առանձնացվել է համաշխարհային այն կոնկրետ առկա փորձը, որը հնարավորություն կստեղծի ապագա սերնդի մոտ ձևավորել և դաստիարակել հանդուրժողականություն:

Հանդուրժողականության հակասականությունը նրանում է, որ մի կողմից անհատը կամ մարդը համակերպվում է հասարակության մեջ բարոյական կամ էթիկական նորմերի խախտման հետ, իսկ մյուս կողմից հանդուրժողականությունը նրանից պահանջում է հրաժարվել այդ երևույթի վրա ազդելու հնարավորությունից: Այս տեսանկյունից հանդուրժողականությունը ընդունվում է իբրև արժեք և իդեալ, այն մշտապես պահանջում է փաստարկումների ամբողջություն:

Մարդու կարողությունը ճանաչելու սեփական վախերը, բազմազան հանդուրժողականության ընդունումն է և օբյեկտիվորեն գնահատելու իր վերաբերմունքն այն մարդկանց նկատմամբ, որոնց հայացքները, կենսակերպը, կրոնը, ազգությունը և այլ բնութագրիչները տարբերվում են իր ունեցածից:

Հանդուրժողականության արդիականացման խնդիրները ներկայացված են Բ. Ս. Գերշունսկու հրապարակումներում, որտեղ սահմանվում է պրակտիկային ուղղված ոլորտներ՝ մարդկային հարաբերություններում հանդուրժողականությունը դաստիարակելու նպատակով:

Հանդուրժողականության ձևավորման խնդրի զարգացման որոշ մեթոդական, տեսական և տեխնոլոգիական նախադրյալներ ներկայացված են հումանիտարմանկավարժության գաղափարներում և մոտեցումներում: Հանդուրժողականության երևույթի առավել լայն սահմանումը տրված սկզբունքների հռչակագրում (ստորագրվել է 1995 թ. նոյեմբերի 16-ին Փարիզում), իսկ ներկայումս նոյեմբերի 16-ը հռչակվել է ամենամյա միջազգային հանդուրժողականության օր, հասարակության ուշադրությունը հրավիրելու անհանդուրժողականության վտանգների վրա:

Հանդուրժողականության հոգեբանական գաղափարներն ու մոտեցումները ձևավորվել են հետազոտող Թ. Ադորոյի կողմից: Հանդուրժողականության ձևավորման խնդրի զարգացման որոշ մեթոդական, տեսական և տեխնոլոգիական նախադրյալներ ներկայացված են հումանիտար մանկավարժության գաղափարներում և մոտեցումներում: Ժամանակակից կրթական համակարգի բարեփոխումները կրթական հարացույցի փոփոխությամբ պայմանավորված, ենթադրում են անցումը դեպի նոր կոմպետենտային հարացույցի, ինչն էլ ստիպում է վերանայել ապագա ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության ձևավորման մանկավարժական պայմանները:

Գիտական գրականության մեջ կան տարբեր մոտեցումներ այս հիմնախնդրի շուրջ, նույնիսկ հանդուրժողականության գաղափարի շուրջ տեսական դիրքորոշումների ենք հանդիպում անտիկ շրջանի մտածողների, այնուհետև միջնադարյան և վերածննդի դարաշրջանի գործիչների աշխատություններում, իսկ մեր օրերում՝ «հանդուրժող ուսուցիչ» և «մանկավարժական հանդուրժողականություն» եզրույթների հստակ մեկնաբանման անհրաժեշտություն կա, ուստի խնդիրը շարունակում է

արդիական մնալ, չնայած այն հանգամանքին առկա են մի շարք հետազոտություններ հոգեբանության, սոցիոլոգիայի, իրավաբանության դաշտում: Հետազոտողների մեծամասնությունը կարծում է, որ հանդուրժողականությունը ենթադրում է անհամաձայնություն, քանի որ նրա օբյեկտը դիտվում է իբրև բարոյապես չարդարացված ու անցանկալի մի բան, եթե նույնիսկ դրա սուբյեկտը որոշում է կայացնում որևէ գործողություն չձեռնարկել այն ամենի նկատմամբ, ինչ ինքն անընդունելի է համարում:

Հանրային դիսկուրսում հաճախ հանդուրժողականությունը դիտվում է որպես գործիք դիմացինին «այլ» կամ «օտար» պարտադրելու համար, որի պատճառով էլ հասարակության որոշակի ներկայացուցիչների մոտ անհանդուրժողական վերաբերմունք է նկատվում ամեն տեսակ հանդուրժողականության նկատմամբ: Այս տեսանկյունից հանդուրժողականություն երևույթն առավել լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է այն դիտարկել մասնավոր հարթությունների մեջ, այսինքն ուսումնասիրել կրոնական, սեռական, դասային, սեռային, քաղաքական հանդուրժողականության ձևերը, որտեղից էլ համապատասխան եզրահանգումներ անել հանդուրժողականության երևույթի մասին առհասարակ: Հասարակության մեծ մասը կարծում է, որ կրոնական կամ էթնիկ պատկանելիությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ քաղաքական մասնակցության համար, ինչը կարելի է հանդուրժողական մոտեցում համարել: Հանդուրժողականությունը ներկայիս ամենիցշատ քննարկված ու միևնույն ժամանակ ամենաքննադատված հասկացություններից է: Հանդուրժողականության մասին ձևակերպումները բազմաթիվ են, այդ պատճառով էլ այս հասկացության հստակ ձևակերպման խնդիրը շարունակում է արդիական մնալ:

Հետազոտության նպատակը հանդուրժողականության՝ որպես ժամանակակից ուսուցչի մասնագիտական կոմպետենցիայի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել «հանդուրժողականություն» հասկացության էությունն ու մեկնաբանությունները ժամանակակից գիտության մեջ:

2. Վերլուծել հանդուրժողականության բաղադրատարրերը՝ որպես ուսուցչի մասնագիտական կոմպետենցիա:

Հետազոտության մեթոդները.

- գիտամանկավարժական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
- դիտում,
- զրույց:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից : Աշխատանքի ծավալը կազմում է 29 համակարգչային էջ:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

1.1 ՛՛Հանդուրժողականություն՛՛ հասկացության էությունը և կառուցվածքը

Հանդուրժողականություն, տոլեռանտություն, հանդուրժել (լատ.՝ tolerantia, համբերություն, համբերատարություն, դժվարությունների ինքնական ընդունում), սոցոլոգիական տերմին, այլ աշխարհահայցքի հետ հարմարվելու կարողություն : Գոյություն ունեն հանդուրժողականություն հասկացության մի շարք սահմանումներ, այնուամենայնիվ, այն միջազգային նշանակություն ձեռք բերեց շնորհիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակագրի: Հենց այս հռչակագրում է բավական խորությամբ արտահայտվում հանդուրժողականության բուն էությունը: Ըստ 1995 թ. նոյեմբերի 16-ի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընդունած ՛՛Հանդուրժողականության սկզբունքների հռչակագրի՛՛ ՛՛հանդուրժողականությունը՛՛ հարգանք է, հարուստ մշակութային բազմազանության ընդունում և ճիշտ ընկալում, մարդկային անհատականության ինքնաարտահայտման յուրօրինակ ձև: Հանդուրժողականությանը բնորոշ է իմացություն, հրապարակայնություն, հաղորդակցում, մտքի խղճի, դավանանքի, համոզմունքի ազատություն: Այն ներդաշնակություն է բազմազանության մեջ: Հանդուրժողականությունը ոչ միայն բարոյական պարտք է, այլև քաղաքական և իրավական պահանջ, պատերազմի մշակույթից խաղաղության մշակույթի: Այն ամենևին էլ զիջում և անտարբերություն չէ: Հանդուրժողականությունը նախ և առաջ ակտիվ վերաբերմունք է, որը ձևավորվում է մարդու համընդհանուր իրավունքների և հիմնական ազատությունների ընդունման միջոցով: Հանդուժողականություն նշանակում է ուրիշին իր սեփական աշխարհահայցքով ապրելու իրավունք վերապահել: Դա չի նշանակում լռել, այլ նշանակում է մեր էությանը խորթ վարքը, տարակարծրությունը, այլ անձի ազատությունները հարգելով հանդերձ՝ կարծիք արտահայտել, փորձել համոզել, վերանայել տեսակետները: Ժամանակակից աշխարհում հանդուրժողականությունը բազմակողմանի ուսումնասիրության

արժանի խնդիրներից է: Վերջին տասնամյակներում ամբողջ աշխարհում հանդուրժողականությունը դարձել է առավել արդիական և լայն տարածում տարբեր կողմերով՝ ներառելով տարբեր խնդիրներ:

Հանդուրժողականության հիմնախնդիրը ձեռք է բերել միջազգային նշանակություն և ընկալվում է որպես բարոյական ակտիվ գաղափարախոսություն, որը ոչ միայն պարզապես այլոց կարծիքները, գաղափարները, գործողությունները ընդունելու միջոց է, այլև էթնիկ և սոցիալական տարբեր խմբերի, կրոնի, մշակույթի նկատմամբ համբերատարության դրսևորման պատրաստակամություն:

Հանդուրժողականության՝ որպես հասարակական երևույթի արդիականություն պայմանավորված է ներկա սոցիոմշակութային համաշխարհայնացման բարդ գործընթացներով, որոնք ազդեցություն են գործում արդի սոցիալական իրականության բոլոր կողմերի վրա, և որոնց գլխավոր արդյունքը տարբեր երկրների ու մշակույթների այնպիսի արժեքների և սկզբունքների միավորն է, որոնք հարկավոր են համակեցության և ազատ զարգացման (ոչ բռնության ռազմավարություն, երկխոսություն, համբերատարություն և այլն) համար, մյուս կողմից՝ հակահամաշխարհայնացման միտումների ակտիվացմամբ: Այս ամենը հանդուրժողականության խնդիրը դարձնում են առավել արդիական և հրատապ ժամանակակից դիսկուրսի բոլոր մակարդակներում: Հանդուրժողականության գաղափարը, որն առաջին հայացքից շատ պարզ է թվում, իրականում այնքան էլ այդպես չէ : Այն սերտորեն կապված է փիլիսոփայական հիմնարար այնպիսի հարցերի հետ, որոնք ուղղված են մարդկային էության բացահայտմանը, իմաստավորմանն ու ընկալմանը, նրա ինքնությանը, իմացության ու հասկացության սահմաններին և կարողություններին : Հանդուրժողականության հակասականությունը նրանում է, որ մի կողմի անհատը կամ մարդը համակերպվում է հասարականության մեջ բարոյական կամ էթիկական նորմերի խախտման հետ, իսկ մյուս կողմից հանդուրժողականությունը նրանից պահանջվում է հրաժարվել այդ երևույթի վրա ազդելու հնարավորությունից: Այս տեսակյունից հանդուրժողականությունը ոչ միանշանակ է ընդունվում իբրև արժեք, այն մշտապես պահանջվում է փաստարկումների ամբողջություն:

Հանդուրժողականություն հասկացությունը, նրանում է, որ մի կողմից անհատը կամ մարդը համակերպվում է հասարակության մեջ բարոյական կամ

էթիկական նորմերի խախտման հետ, իսկ մյուս կողմից հանդուրժողականությունը նրանից պահանջվում է հրաժարվել այդ երևույթի վրա ազդելու հնարավորությունից: Այս տեսանկյունից հանդուրժողականությունը ոչ միանշանակ է ընդունվում իբրև արժեք, այն մշտապես պահանջվում է փաստարկումների ամբողջություն: Հանդուրժողականությունը ոչ միանշանակ է ընդունվում իբրև արժեք, այն մշտապես պահանջում է փաստարկումների ամբողջություն:

Հանդուրժողականություն հասկացությունը, անմիջականորեն կապված է բազմազանություն հասկացության հետ: Բազմազանությունը (diversity) լայն իմաստով նշանակում է իմանալ, հասկանալ ը,նդունել, արժևորել տարբերությունները մարդկանց միջև՝ հարգելով նրանց սեռը, տարիքը, էթնիկ պատկանելիությունը, ռասան, ֆիզիկական ու մտավոր կարողությունները, սեռական կողմնորոշվածությունը, կրոնը և սոցիալական կարգավիճակը: Բազմազանության և հանդուրժողականության սահմանման փորձեր եղել են և դեռևս շարունակվում են, քանի որ միանշանակ սահմանում տալը բավականին բարդ է, սակայն շատ կարևոր է հստակ տարանջատել, օրինակ, հանդուրժողականությունը հարմարվողականությունից, համբերատարությունից, անտարբերությունից և այլ մի շառք հասկացություններից, որոնք հաճախ նույնացվում են պրակտիկայում: Այս տերմինների ու դրանք արտահայտող բովանդակությունների ոչ հստակ սահմանումները կարող են խառնաշփոթ առաջացնել տարբեր իրավիճակներում ու հանգեցնել իրավիճակի ոչ ադեկվատ ընկալմանը: Հանդուրժողականությունը չի կարելի նույնացնել անտարբերության կամ կասկածամտության հետ, այն կարող է վերածվել անտարբերության, եթե հանդուրժողական լինելու անվան տակ անտարբերություն է դրսևորվում անընդունելի վարքագծի նկատմամբ:

Օրինակ՝ Լեկտորսկին, ով առաջ է քաշել հանդուրժողականության մի քանի մոդելներ, մեկնաբանում է այն որպես անտարբերություն զանազան հայացքների ու պրակտիկաների գոյության նկատմամբ, քանի որ դրանք դիտարկվում են որպես երկրոդային կամ ոչ էական հասարակության առջև ծառացած հիմնախնդիրների համեմատ: Միևնույն ժամանակ այն կարող է նաև վերաճել կասկածամտության, եթե հանդուրժողականության անվան տակ հրաժարվում ենք կարծիք հայտնել որևէ երևույթի կամ վարքագծի նկատմամբ:

Ֆրանսիացի փիլիսոփա Պ. Բեյլն առաջիններից էր, որ հստակ ձևակերպում տվեց հանդուրժողականությանը, որի համաձայն անթույլատրելի էր համարում հետապնդումներն այլախոհների նկատմամբ, անթույլատրելի են բոլոր այն արարքները, որոնք վիրավորում են այլ մարդկանց զգացմունքները՝ անկախ այն հանգամանքից մենք հավանում ենք այդ հայացքները թե ոչ:

Ժամանակակից ճանաչված փիլիսոփաներից Կ. Պոպերը փորձում էր հանդուրժողականության սահմանները վերլուծել կասկածամտության միջոցով, համաձայն որի նա պնդում էր, որ

ա) ես կարող եմ սխալվել, իսկ դու կարող ես ճիշտ լինել,

բ) բանական քննարկման միջոցով մենք կարող են ուղղել մեր թույլ տված սխալները

գ) բանական քննարկումների ճանապարհով մենք կարող ենք մոտենալ ճշմարտությանը:

Այս պարագայում չենք կարող չհիշել հայտնի գերմանացի փիլիսոփա Հեգելի դիալեկտիկական սկզբունքը, համաձայն որի հակասություններն են շարժում աշխարհը: Եթե հասարակության մեջ բացառվի այլախոհությունը, անհադուրժողական ու թշնամական վերաբերմունք որդեգրվի մեծամասնության կողմից յուրաքանչյուր այլախոհի նկատմամբ, ապա այդ հասարակության մեջ կխախտվի հավասարակշռությունը և հնարավոր չի լինի առաջընթացն ու նորարարությունը: Այսպիսին է ժամանակակից կյանքի բնութագիրը: Պատահական չէ, որ հանդուրժողականությունը դարի հասարակության ձև է ժամանակակից գլխավոր արժեքներից մեկը, և նրա ձևավորումը դիտվում է որպես արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման հիմնարար քաղաքացիներին, և տարբեր մշակութների ներկայացուցիչներին, և ամուսիններին, և երեխաներին, և պարզապես մարդկանց, որոնցից յուրաքանչյուրն ունի իր անձնային ՛՛ես՛՛-ը, իսկ դա նշանակում է, որ հանդուրժողականությունը դարձել է ժամանակակից կյանքի անհրաժեշտ նորմ և հասարակության սոցիոմշակութային տարածության կառուցարկման եղանակ: Հանդուրժողականությունը հասարակության կարևորագույն նորմ և բնութագրիչ է: Այն ոչ միայն մեծագույն արժեք է, այլ նաև բարոյական իդեալ, որին պետք է ձգտեն թե անհատը, թե հասարակությունը: Արդի աշխարհում հանդուրժողակաության ընդունումը որպես արժեք բավարար չէ հանդուրժող անհատ, առավել ևս հանդուրժող հասարակություն ձևավորելու համար: Այսօր

հանդուրժողականությունը բացարձակ անհրաժեշտություն է: Հանդուրժողականություն ցուցաբերելը նվազագույնն է, որ հասարակությունը կարող է պահանջել իր անդամներից: Ժամանակակից հասարակությունը դառնում է ավելի բևեռացված: Սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում դրսևորվող տարբերություններն ու բազմազանությունները դառնում են արդի հասարակության հիմնական բնութագրիչները:

Հանդուրժողականությունը հանդես է գալիս որպես մարդկային հանրույթների ձևավորման և պահպանման ձգտում ու հնարավորություն: Այն բավականին բարդ և հազվադեպ ձեռքբերում է, քանի որ ցանկացած հանրույթի հիմքում ընկած է համընդհանուր գիտակցությունը: Մենք միավորվում ենք մեկ միասնական հանրույթում նրանց հետ, ովքեր կիսում են մեր համոզմունքները, խոսում են միևնույն լեզվով կամ ունեն միևնույն մշակույթը, նրանց հետ, ովքեր պատկանում են միևնույն էթնիկական խմբին: Մարդկային ողջ պատմության ընթացքում միասնական լեզուն, միևնույն էթնիկական հանրույթների պատկանելիությունը, ճակատագրերի ընդհանրությունը և դրանց համատեղ ապրումը ծառայել են որպես համայնքի, ազգի, հանրույթի ձևավորման և պահպանման հիմք:

Էթնիկական ցանկացած հանրույթ առաջին հերթին մարդկային կյանքի բնական զարգացման արդյունք է: Այն հենվում է մարդածին հատկությունների վրա և որոշ իմաստով ինքնաբավ է: Իրադարձությունների բնականոն զարգացման պարագայում էթնիկ հանրույթը քաղաքական կազմակերպումի հակվածություն չունի: 20-րդ դարի կեսերին էթնիկականություն ասելով հասկանում էին բնական, ֆիզիոլոգիական-կենսաբանական և ծագումնաբանական գործոնների ամբողջությունը: Դժվար չէ նկատել, որ այս ըմբռնումը էթնիկականությունը ամբողջովին ածանցում է մարդկանց արյունակցական-ազգակցական որակներից: Չանտեսելով էթնոսի բնական-ծագումնաբանական գործոնների բնորոշ առանձնահատկությունները՝ հարկ է նկատել, որ էթնոսը նաև սոցիոմշակութային ընդհանրությունների սոցիալական կազմակերպման ձև է և բնականորեն տրված որակների հետ մեկտեղ՝ ունի նաև պատմականորեն ձևավորված և մշտապես վերարտադրվող սոցիոմշակութային տիպական որակներ:

Ինչպես նշում է Ա. Դ. Սմիթը. «Մարդկանց էթնիկ նույնականության ձևավորման հիմքում առաջին հերթին ընկած է ծագումնաբանական միասնական առասպելները, նույն աշխարհագրական տարածքի ընդհանրությունը,

համերաշխության զգացումը և այլն»:

Սեփական գործունեության մեջ ստեղծագործական մոտեցում կիրառելը մանկավարժի ամենակարևոր առանձնահատկությունն է և պայման՝ մասնագիտական զարգացման համար: Ինչպես նշում է Դավիդովը՝ անհատականություն և ստեղծագործականություն հասկացություններն անբաժան են միմյանցից [6]: Այս տեսանկյունից մանկավարժը, ով համարվում է մանկավարժական գործունեության սուբյեկտ, սակայն դադարում է աշխատել սեփական անձի զարգացման վրա և չի մասնակցում նորարարական գործունեությանը, անհատականությունը մահանում է նրա մեջ: Մանկավարժը, ով գիտակցում է անհատականություն լինելու կարևոր նշանակությունը, մշտապես ձգտում է ստեղծել ինչ-որ նոր, դեռևս ուրիշների կողմից չստացած նորույթ և դրանով իսկ ընդգծում է իր անհատականությունը: Մանկավարժը խնդիրը պետք է ընկալի տարբեր տեսանկյունից՝ չփոփոխելով խնդրի սեփական ընկալումը: Այդպիսի մանկավարժը կողմնորոշված է դեպի իրական ապագան, ոչ թե անցյալը: Նա հաղթահարում է կրթական գործընթացում ստեղծված խոչընդոտները, պլանավորում է ապագան, ինչպես նաև իր բոլոր գործողություններն ու ձեռբերումները: Նրան հատուկ է արդարության զգացումը և նա գիտի կրթության և ուսուցման բարձր արժեքը:

Հանդուրժողական գիտակցության և ծայրահեղականության կանխարգելման ծրագրում «հանդուրժողականության ժամանակակից հասկացությունը» սահմանվում է հետևյալ կերպ.

- քաղաքացիական հասարակության արժեքը և սոցիալական նորմը, որը դրսևորվում է քաղաքացիական հասարակության բոլոր անհատներից տարբերվելու իրավունքի մեջ,
- տարբեր սոցիալական խմբերի միջև կայուն ներդաշնակության և կառուցողական փոխգործակցության ապահովումը,
- հարգանք աշխարհի տարբեր մշակույթների, քաղաքակրթությունների և ժողովուրդների բազմազանության նկատմամբ:

Հիմնվելով հանդուրժողականության տարբեր սահմանումների վերլուծության վրա, մենք որոշում ենք ուսումնասիրվող երևույթի հիմնական հատկանիշները, ըստ որի հանդուրժողականությունը հետևյալն է.

- մտքի, քաղաքական, կրոնական, էթնիկական և այլ հայացքների բազմազանության ընդունելի լինելու և արդարացի գոյության ճանաչում,
- այլ անձի իրավունքների և ազատությունների այդ թվում՝ մեկ այլ անձի սեփական հավատալիքների, ուրիշներից տարբերվելու իրավունքի ակտիվ ճանաչում,
- հարգալից, համբերատար վերաբերմունք, այլ մարդկանց կարծիքների, համոզմունքների, վարքագծի նկատմամբ,
- թույլ տալ մարդկանց բաց արտահայտել իրենց մտքերը,
- մյուսի նկատմամբ փոխըմբռնման և երկխոսության տրամադրվածություն:

Հաշվի առնելով հանդուրժողականության կատեգորիայի գիտականությունը, դրա էության բացահայտման նպատակով մենք համարում ենք, որ անհրաժեշտ է դիտարկել հանդուրժողականությունը տարբեր գիտությունների տեսանկյունից, որոնք բացահայտում են այս երևույթի տարբեր իմաստները: Հանդուրժողականության փիլիսոփայական սահմանումը հիմնված է այլ անձի իրավունքների և ազատությունների ճանաչման վրա՝ անկախ իր էթնիկ, կրոնական կամ գենդերային առանձնահատկություններից:

1.2. Հանդուրժողականության ձևավորումը որպես ապագա մանկավարժի մասնագիտական կոմպետենցիա

Անգլերեն-հայերեն բառարանում «competence» բառը նշանակում է՝

1. ունակություն, կարողություն,
2. ձեռնհասություն, իրազեկություն,
3. իրավունք, իրավասություն, լիազորություն:

Մանկավարժական կոմպետենցիա ասելով հասկանում ենք մասնագիտական գործունեության ընթացքում ուսոցչի տեսական և պրակտիկ գիտելիքների համակցումը: Ըստ Լ. Յու. Կիֆցովի՝ «մասնագիտական կոմպետենցիան մասնագետի ինտեգրված հատկանիշ է ունեցած գիտելիքների, հնարավորությունների, կարողությունների մակարդակի հիման վրա, ինչն ուղենիշ է հանդիսանում դեպի մասնագիտական արհեստավարժություն»: Ն. Վ.

Կուզմինայի, Լ. Մ. Միտինայի, Վ. Ն. Վեդենսկու և ուրիշների կարծիքով մանկավարժական կոմպետենցիան՝

- սահմանափակումները հաշվի առնելու և կանոնակարգերով գործելու ընդունակությունն է,
- գիտելիքներին, կարողություններին, հմտություններին տիրապետելու տեխնիկան է,
- նպատակային կողմնորոշումները, մոտիվները և հարաբերություններն են,
- այս կամ այն ոլորտի գիտելիքներն ու փորձն են,
- հոգեբանամանկավարժական պահանջների իրազեկության մակարդակն է,
- որակ է, որն ապահովում է խնդիրների լուծումը: [4]

Ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների զարգացումը օրապահանջ է: Պատմական այս փուլում գիտատեխնիկական զարգացման պայմաններում պիտի փոխվեն նաև կրթությանը ներկայացվող պահանջները: Կրթությունն իրականացնող սուբյեկտը ՝ մասնկավարժն իր իմիջով խիստ տարբեր է նախորդ դարերի ուսուցիչներից: Այսօր աշակերտակենտրոն և փոխներգործուն ուսուցումը պահանջում է այլ որակի մասնագետ:

Մանկավարժ, ով կարևորում է աշակերտի մտածողության զարգացումը, ուսուցման ժամանակ հենվում է աշակերտների կարծիքի հիման վրա, փորձում է ավելի ակտիվ ուսուցում իրականացնել:

Դպրոցի գերխնդիրն է կոմպետենտ մանկավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները: Գիտնականներ Ա. Ա. Դերկաչը և Ի. Ա. Զիմնյայան համարվում են կոմպետենցիաների դասակարգումների հեղինակներ: Նրանք «կոմպետենտություն» և «կոմետենցիաներ» գաղափարները կիրառվում են ուսուցման վերջնական որակն արտացոլելու համար, որոշներն էլ վերոնշյալ եզրույթները կիրառում են տարբեր հատկանիշներով օժտված անձնաց բնութագրելու համար:

Ըստ Ջ. Ռավենի՝ «կոմպետենտությունը մասնագետի ընդունակությունն է, որն անհրաժեշտ է որոշակի կոնկրետ առարկայական բնագավառում կոնկրետ գործողություն կատարելու համար՝ ներառյալ նեղ մ,ասնագիտական գիտելիքները, յուրահատուկ առարկայական հմտությունները, մտածողության ձևերը, իր գործողությունների համար պատասխանատվության գիտակցումը»:

Կոմպետենցիաները հանրակրթության բովանդակության մեջ

մասնավորեցվում և որոշակիացվում են ուսումնական բնագավառների կոմպետենցիաների տեսքով՝ որպես սովորողների պատրաստվածությանը ներկայացվող որակական պահանջներ: Ըստ այդմ՝ սովորողը պետք է՝

- կարողանա լիարժեք հաղորդակցվել հայերենով և լիարժեք տիրապետի գրական հայերենին,
- կարողանա արդյունավետ հաղրդակցվել առնվազն երկու օտար լեզվով,
- ունենա մաթեմատիկական և բնագիտական համակարգված գիտելիքներ, զարգացած լեզվատրամաբանական մտածողություն, ճանաչողական, կիրառական և ստեղծագործական կարողություններ,
- ունենա թվայնացված տեխնոլոգիաների օգտագործման կարողություններ,
- ունենա նպատակային ուսումնառության և ինքնուրույն սովորելու կարողություններ, սովորելու կամք և վստահություն սեփական ուժերի հանդեպ,
- կարողանա սովորել և սովորեցնել,
- ունենա կենցաղային, աշխատանքային հմտություններ, լինի նախաձեռնող և գործունյա, ունակ լինի ստեղծագործական նախագծեր կազմելու և այն իրականացնելու:

Կոմպետենցիան հարցերի և խնդիրների շրջանակ է, որից մարդը բավականին գիտակ է, և այն ստուգված է փորձով: Այսպիսով՝ կոմպետենտ մարդն օժտված է որոշակի գիտելիքներով, ընդունակություններով, ինչն իրեն հնարավորություն է տալիս յուրահատուկ դարձնել իր գաղափարները և արդյունավետորեն գործել: Ընդհանուր առմամբ մենք կարող ենք կոմպետենցիաները սահմանել որպես մի մոտեցում, որը ներառում է այնպիսի հայեցակետեր, ինչպիսիք են՝

- գիտելիք /իմանալ ի՞նչ/
- վերաբերմունք և վարքագծեր /գիտակցել, թե ինչպես ենք գործում, ինչ իրավիճակում և ինչու/
- դիրքորոշումներ /բաց լինել փոփոխության նկատմամբ, մոտիվացվել/
- ընթացակարգային հմտություններ /իմանալ, թե ինչպես անել/
- ճանաչողական հմտություններ /աշխատել տվյալների հետ, քննադատական մտածողություն և քննադատական վերլուծություն/

- փորձառական հմտությունները /իմանալ, թե ինչպես վարվել և հարմարվել՝ հիմնվելով նախկին գիտելիքների և սոցիալական հմտությունների հիման վրա/:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունը բաղկացած է հետևյալ կոմպետենցիաներից.

- Ելակետային կոմպետենցիաներ , որոնք հատուկ են ունիվերսալ ուսուցիչներին և ապահովում են նպատակային, արդյունավետ մանկավարժական գործունեություն:
- Առարկայական կոմպետենցիաներ, որոնք բնորոշում են կոնկրետ ուսուցիչներին և ապահովում են կոնկրետ ուսումնական առարկայի արդյունավետ դասավանդումը:
- Մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք հատուկ են նեղ մասնագիտության մանկավարժներին և ապահովում են ծագող մանկավարժական խնդիրների լուծումը, անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, արտադպրոցական աշխատանքների ժամանակ:

Աշխատանքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ պահանջում է սոցիալական, ախտորոշող և զարգացնող կոմպետենցիաներ: Ելակետային, մասնագիտական և առարկայական կոմպետենցիաները ապահովում են ուսուցչի պրոֆեսիոնալիզմը [3, 31-34]:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացման համար անհրաժեշտ է ձևավորել ինքնակատարելագործման մոտիվացիա հանուն նոր գիտելիքների և մասնագիտական հմտությունների ձեռքբերման: Մասնագիտական ինքնակատարելագործումը հնարավորություն է տալիս զարգացնելու մասնագիտական գործունեության կարողություններն ու հմտությունները: Վերջիններս ուսուցչին անարդյունավետորեն գործելու հնարավորություն են տալիս, և ըստ Վ. Գ. Գորբի և Վ. Ա. Դիոմինի համարվում են մասնագիտական կոմպետենտության ինտեգրացնող բաղադրիչներ [9]:

1.3. Մանկավարժի հանդուրժողականության կոմպետենցիաները

Հանդուրժողականության հասնելու ճանապարհը լուրջ հուզական, ինտելեկտուալ աշխատանք և մտավոր սթրես է, քանի որ դա հնարավոր է միայն

սեփական անձի, կարծրատիպերի, գիտակցության փոփոխության դեպքում: Եթե մանկավարժը հանդուրժող, վստահ և բարին ցանկացող է, նա սովորողի մոտ հանդես է գալիս որպես սովորեցնող, դաստիարակող: Հանդուրժողականության ուսուցումը ներառում է հոգեբանական-մանկավարժական դասընթացներ, որոնք իրականացնում են հետևյալ խնդիրները.

- ծանոթացում այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, հանդուրժողական վերաբերմունքը, հանդուրժողական գիտակցությունը,
- այդ հասկացությունները յուրացնելով՝ սեփական որոնումների և գործունեության խթանում,
- այնպիսի հմտությունների ձեռքբերում, ինչպիսիք են հանդուրժող վարքագիծը, հանդուրժողական փոխհարաբերությունները ընտանիքում, դպրոցում, փողոցում և կյանքի այլ բնագավառներում:

Հանդուրժողական անձի դաստիարակությունը իրականցվում է ընտանիքում, դպրոցում, այլ կրթական և արտադպրոցական հաստատություններում: Մանկավարժի գերխնդիրն ու առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը: Հանդուրժող ուսուցիչը դաստիարակում է հանդուրժող աշակերտներ: Մանկավարժը կոչված է ոչ միայբ սովորեցնելը գիտության հիմունքները երեխաներին, խթանել նրանց բազմակողմանի զորգացումը, այլև ձևավորել սեր ու հարգանք աշխատանքի նկատմամբ, պատրաստակամություն՝ սեփական աշխատանքով մասնակցելու նյութական բարիքների արտադրությանը: Իրականում ուսուցիչը կսնգնած է երկրի արտադրողական ուժերի զարգացման, նրանց առաջընթացի, ստեղծագործական պոտենցիալի ակունքներում: Մանկավարժի գործը մարդկային ախատանքի ամենադժվար բնագավառներից մեկն է, որտեղ ուսուցիչը սխալվելու իրավունք չունի, որովհետև ուսուցչի ամեն մի սխալ քայլը կարող է լինել ճակատագրական երեխայի համար: Լավ ուսուցիչը այն մարդն է, ով սիրում է երեխաներին, բերկրանք է զգում նրանց հետ շփվելիս և հավատում է, որ ամեն երեխա լավ մարդ կդառնա: Ուսուցիչը պետք է չվիրավորի երեխայի ինքնասիրությունը, հարգի նրանց մարդկային արժանապատվությունը, լինի հոգատար և ուշադիր: Հանդուրժող ուսուցիչը լավատես է, կյանքը սիրող, բարի, կենսուրախ, անընդհատ իր առջև դնում է ստեղծագործական նպատակներ, ցանկալիին հասնում է սեփական ջանքերով, իրեն և իր կարգավիճակը չի

ընդունում չափազանց լուրջ, կարող է ինքն իր վրա ծիծաղել: Նա հարգում է ուրիշի կարծիքը, սովորեցնում է քննադատաբար մտածել և կարողանում է գնահատել ուրիշների դիրքերը, գնահատում է մշակութային բազմազանությունը, ստեղծում է պայմաններ դրանք ընդունելու համար, նպաստում է աշակերտների և ծնողների ներգրավմանը որոշումների կայացմանը և համատեղ գործողությունների ծրագրերի մշակմանը:

Մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին գտնում էր, որ դասիարակվողի անձի կայացման մեջ կարող է օգնել միայն այն դաստիարակը, որն ինքն է հանդիսանում բարձր անհատականություն, որն տնդունակ է ձևավորել երեխայի սիրտն ու կամքը: Սահմանելով պահաքնջները ուսուցչի անձին, որոնք ապահովում են նրա պատրաստվածությունը մասնագիտական գործունեության բնագավառում, մանկավարժահոգեբանական գիտությունը ձգտում է դրանք միավորել առավել ընդհանրական հատկություններում: Այդ հատկությունների բնագավառը բավականին բազմատիպ է [14]:

Պրոֆեսիոնալիզմի առավել բարձր աստիճան է համարվում մանկավարժական վարպետությունը, որի բովանդակությունը կազմում են ուսուցչի հոգեբանամանկավարժական հմտությունը՝ մարդասիրություն, օրինապահություն, արդարություն, պրոֆեսիոնալ ընդունակություններն ու մանկավարժական տեխնիկայի բնագավառի կարողությունները: Վարպետ ուսուցչի գործունեության մեջ գլխավորը ստեղծագործական սկիզբն է, մշտական որոնումը, մանկավարժական ներգործությունների մեթոդիկայի կատարելագործումը [6]: Անձնավորության ձևավորումն ընթանում է որոշակի պատմական ժամանակահատվածում և կոնկրետ սոցիալմշակութային միջավայրում: Երեխան հարմարվում է սոցիալական միջավայրին մեծահասակների օգնությամբ, որոնք սովորաբար փորձում են մատուցել երեխային «արջի ծառայություն»՝ մատնացույց անելով հասարակական գոյատևման ընդունված ավանդական եղանակները: Իրականում մանկավարժի գործունեության իմաստն ավելի բարդ է և պատասխանատու, քան թվում է առաջին հայացքից: Այն ուղղված է ինքնուրույն մտածելակերպի և կյանքի դիրքորոշման ձևավորմանը, ինչը հնարավորություն է տալիս ազատ կողմնորոշվելու և գիտակցաբար ընտրելու հասարակության հետ հարաբերվելու եղանակները: Հանդուրժող ուսուցչի մոդելը տարրական դպրոցում: Այս տարիքը անձի ձևավորման և զարգացման դպրոց է, և ուսուցչի գերխնդիրն է ոչ թե

մայրենի լեզվից և մաթեմատիկայից համակարգված գիտելիքների հաղորդումը, այլ դրանք ինքնաճանաչման, ինքնադրսևորման, նրանց մտածողությունն ու խոսքը զարգացնող, անձնային բարձրարժեք որակներ ձևավորող և ապագա ուսումնական գործունեության համար պատրաստ անձ ձևավորելու համար անհրաժեշտ միջոցներ են: Ուսուցիչը պետք է տիրապետի այնպիսի մանկավարժական հմտությունների, որոնք կնպաստեն կրտսեր դպրոցականների ներքին ռեսուրսների բացահայտմանը և դրանց ճիշտ ուղղորդմանը: Հանդուրժողականությամբ օժտված ուսուցիչը կցուցաբերի բարձրակարգ մասնագիտական կրթվածություն և կապահովի կրթության բարձր որակ [17]:

Հանդուժողականությունն արժեք է, որը պետք է իմաստավորվի, վերապրի սովորողի հոգում, որպեսզի դառնա նրա կենսական արժեքը: Հանդուրժող երեխաներն ավելի մտերիմ են և ընկերասեր: Չպետք է խառնել հանդուրժողականությունը թուլության հետ: Հանդուրժել չի նշանակում թույլ լինել, կատարել այլոց ցանկությունները անվերապահորեն:

Լեհ նշանավոր մանկավարժ Յանուշ Կորչակը գտնում էր, որ իսկական մանկավարժը նա է, ով երեխային սովորեցնում է.

- ոչ միայն սիրել, այլ նաև ատել,
- ոչ միայն հարգել, այլ նաև արհամարհել,
- ոչ միայն համաձայնվել, այլ նաև բողոքել,
- ոչ միայն ենթարկվել, այլ նաև ապստամբել:

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ

Տեսամեթոդական գրականության ուսումնասիրության արդյունքների վրա հիմնվելով՝ առանձնացնում եմ հանդուրժողականության այն բաղադրատարրերը, որոնք, ըստ իս, կարևոր են այսօրվա ուսուցչի հանդուրժողական կոմպետենտության մեջ.

Հանդուրժողական կոմպետենտության բաղադրատարրեր

համբերատարություն
համագործակցություն
սթրեսակայունություն
ասերտիվ վարքագիծ
հուզական գրագիտություն
«ոչ ստանդարտ» աշակերտների ընդունում
հաղորդակցական հանդուրժողականություն

աշակերտների բազմազանության ընդունում
մարդկային արժանապատվության հարգում
աշակերտների իրավունքների հարգում
բռնությունից հրաժարում
ուսուցիչ-աշակերտ-ծնող փոխհարաբերություններ
համերաշխություն
կարծրատիպերից հրաժարում
խաղաղության ոգի
արդարության զգացում

Ես աշխատում եմ Հրազդանի Վ.Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոցում որպես երաժշտության ուսուցիչ: Դասղեկական պարտականություններ եմ ստանձնել 6-րդ դասարանում: Դասարանը բաղկացած է 34 սովորողներից, որոնցից թվային առումով գերակշռում են տղաները: Դասարանում հաճախ առաջանում են կոնֆլիկտներ: Հերթական դասղեկի ժամը անցկացրեցի«Հանդուրժողականություն » թեմայով: Ստորև ներկայացնում եմ պլանը.

Թեմա՝ «Հանդուրժողականություն »

Նպատակը-նպաստել աշակերտների մոտ հանդուրժողականության մշակույթի ձևավորմանը:

Ընթացքը.

Տեսասահիկի միջոցով ցուցադրել տղայի նկար: Խնդրել աշակերտներին նկարագրել տղային:

Աշակերտներ - կանաչ մազեր,արտասովոր սանրվածք,ականջին ականջօղ,ռոքեր…

Դասղեկ-Եվ ահա մի օր մեր դասարան է եկել նոր աշակերտ: Նրա անունը Կարեն է, և նա պետք է նստի օրինակ Արմանի,կամ Լևոնի, կամ Վաչիկի կողքը: Իսկ նրանք ասացին, որ չեն սիրում նման արտաքինով տղաների: Նախկինում, երբ քաղաքում պատահաբար հանդիպեին նման արտաքինով տղաների, զզվանքով, արագ-արագ կանցնեին նրա կողքով՝ փորձելով անգամ չդիպչել նրան: Ի՞նչ անել:Մի կողմից մեր տղաները չեն սիրում նման արտաքինով տղաներին, մյուս կողմից՝ուսուցիչները հորդորում են այնպես անել, որ Կարենը իրեն օտար չզգա: Ինչպե՞ս կպահեք ձեզ երեխաներ:

Հնչեցին հետևյալ պատասխանները-« Խիստ հայացքով կնայեմ նրան: Կխրատեմ, որ նման տեսքով չի կարելի գալ դպրոց: Բարձր կծիծաղեմ: Ջնստես կողքս, ինձնից հեռու գնա»:

Միայն աշակերտների 20 % ցանկացավ, որ Կարենը նստի իրենց կողքը:Այն հարցին, թե ինչու,նրանք ասացին,որ նա էլ իրենց նման երեխա է:

Ուսուցիչ- Այո ,որովհետև նույնն են ձեռքերը, ոտքերը, մազերը, ճիշտ է մազերի գույնը տարբեր է, որովհետև բոլորը չեն կարող իրար նման լինել: Շատ հաճախ առնչվում ենք այնպիսի մարդկանց հետ, որոնք ունեն մաշկի այլ գույն, պատկանում են այլ ազգության, դավանում են այլ կրոն, գուցե ունեն սեռական այլ կողմնորոշում, կամ ուղղակի ունեն այլ՝ երբեմն ընդունված ձևին չհամապատասխանող հագուստ, սանրվածք, շարժուձև: Մեզանից որոշակի հատկանիշներով տարբերվող մարդիկ երբեմն կարող են դուր չգալ մեզ, նույնիսկ նյարդայնացնել ու զայրացնել: Հարց է առաջանում, թե ինչպես պետք է վարվել այդպիսի իրավիճակներում, որպեսզի մարդկանց տարբերությունների հանդեպ մեր պատասխան վերաբերմունքը չփչացնի հասարակության առողջ ու ներդաշնակ մթնոլորտը: Այստեղ մեզ օգնության է գալիս այսօր չափազանց կարևորվող եւ քարոզվող արժեք՝ հանդուրժողականությունը, որի մասին էլ կխոսենք այսօր:



Հանդուրժողականության հիմքում ընկած են՝



Մարդասիրությունն է բերում հանդուրժողականություն, օգնում է հաղթահարել շփման վախերը և տալիս է մարդկանց աճելու և զարգանալու հնարավորություն: Ինչպես մեր մեջ դաստիարակել հանդուրժողականություն: Անհրաժեշտ է ,որ յուրաքանչյուրս սկսի իրենից: Ցանկացած անհանդուրժողականություն հիմնված է վախերի վրա:

Մեկը գեղեցիկ է, մեկը խելացի, մեկը կարող է ինչ-որ բան խլել ինձանից,մյուսը կարող է ինձ հեղացնել՝ պետք է դադարել վախենալուց: Ինչքան կրթված և դաստիարակված է մարդը՝ առավել հանդուրժող է լինում ինքը շրջապատում,կյանքում և ամբողջ աշխարհում: Չէ, որ մարդը անհատ է, ինքնատիպ:Յուրաքանչյուրի համար կարելի է գտնել անհատական մոտեցում, լինել հանդուրժող ցանկացած իրավիճակում:

Եկեք տեսնենք, թե ինչպես է բացատրվում հանդուրժողականությունը տարբեր լեզուներով և ընդհանրացնելով տանք «հանդուրժողականության» ձևակերպումը:

Եվ այսպես ֆրանսերեն-այնպիսի հարաբերություններ,երբ ընդունում ենք,որ ուրիշները կարող են մտածել և գործել այլ կերպ,քան դուք

անգլերեն-պատրաստակամություն, լինել հերոդամիտ, զիջող

խոպաներեն-ընդունակություն, ընդունել սեփական գաղափարներից կամ կարծիքներից լավերը արաբերեն-ներողամտություն,մեղմություն,համբերատարություն,գթասրտություն չինարեն-թույլ տալ,ընդունել,ուրիշների նկատմամբ լինել մեծահոգի:

Կարող ենք ասել՝ հանդուրժողականությունը խաղաղության խորհրդանիշն է երկրագնդի վրա:

Դասղեկ-Իսկ հիմա երեխաներ կկատարենք խմբային աշխատանք՝պահպանելով հանդուրժողական շփման կանոնները.

1.Հարգիր զրուցակցիդ:

2.Փորձիր հասկանալ ինչ է ասում դիմացինդ:

3.Քո կարծիքը առաջ տար նրբանկատ:

4.Արդար եղիր և պատրաստ ընդունելու դիմացինի ճիշտ լինելը:

Խմբային աշխատանք-«Հանդուրժող և անհանդուրժող մարդ»

Առաջին խումբ՝

1.Նշեք որակներ, որոնք մարդուն բնութագրում են որպես հանդուրժող և դրանք գրեք թերթիկի վրա:

2.Նշեք, թե ինչի տոկոսով եք ձեզ համարում հանդուրժող:

3.Հայտնեք ձեր կարծիքը, ինչն է նպաստում լինել հանդուրժող և ինչն է խանգարում այդպիսին լինել:

4.Որ դասերին է հնարավոր հաջողությամբ ձևավորել հանդուրժողականություն:

Երկրորդ խումբ՝

1.Նշեք որակներ, որոնք բնորոշ են անհանդուրժող մարդուն և գրեք թերթիկի վրա:

2.Հնարավոր է հանդուրժողականություն դեռահասների մոտ:

3.Կարող է մարդկանց իրար համեմատելը բերել անհանդուրժողականության:

Աշխատանքն ավարտելուց հետո քննարկում ենք երկու խմբերի աշխանանքները, կազմակերպում կարծիքների փոխանակում հանդուրժողականության մթնոլորտում:

I խումբ II խումբ

Մարդու ուղին,ով լավ է ճանաչում ինքն իրեն՝ Մարդու ուղին,ով ընդունում է սեփական բացառիկությունը՝ շրջապատում իրեն լավ է զգում,հասկանում է չի ընդունում ուրիշ հայացքներ, գաղափարներ: ուրիշներին և պատրաստ է աջակցել:

Վերջում՝ հանձնարարվում է աշակերտներին թղթի վրա նկարել իրենց ձեռքերը, մատների վրա գրել լավ որակները, իսկ ափի մեջ այն,ինչ կուզեն փոխել իրենց մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով մանկավարժահոգեբանական գրականության ուսումնասիրությունից և վերլուծությունից՝ կարելի է եզրակացնել.

1. Տարբեր գիտությունների համակարգում «հանդուրժողականություն» հասկացության վերլուծության արդյունքում եզրահանգեցինք, որ եզրույթը մեկնաբանվում է ոչ միանշանակ, կան տարբեր մեկնաբանություններ և վերլուծություններ դրա վերաբերյալ, սակայն կան նաև որոշ ընդհանրություններ և հոմանիշներ, որոնք բացահայտում են եզրույթի էությունը և գործառութային նշանակությունը՝ համաձայն որի հանդուրժողականությունը դիտարկում է որպես ուրիշների վարքի մոդելների, համոզմունքների և արժեքների հանդեպ ազատական ընդունման դիրքորոշում:
2. Ժամանակակից մասնագետների պատրաստումը հիմնվում է մասնագիտական կոմպետենտության ձևավորման վրա: Այս համատեքստում մանկավարժական հանդուրժողականությունն իբրև ուսուցչի մասնագիտական կոմպետենցիա դրսևորվում է նրա մանկավարժական գործունեության մեջ՝ դիտարկվելով որպես ուսուցչի վարքականոնի պարտադիր բաղադրատարր, հիմնարար սկզբունքներից մեկը, այսինքն՝ այն գտնվում է ուսուցչի մասնագիտական կոմպետենտության կենտրոնում և դրանով է պայմանավորված ժամանակակից ուսուցչի հանդուրժող վարքագծի ձևավորումը:
3. Մեր կողմից կրթական միջավայրի ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են նաև այն մանկավարժական պայմանները, որոնք կնպաստեն բուհում ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստման գործընթացում հանդուրժողականության՝ որպես մասնագիտական կոմպետենցիայի ձևավորմանը: Դրանք են՝
   - բուհում էթիկայի հանձնաժողովի գործունեությունը,
   - բուհի զարգացնող կրթական միջավայրը,

- ապագա մանկավարժների մասնագիտական պատրաստման անձնակողմնորոշիչ համակարգը,

- ուսանողակենտրոն մոտեցումները և ուսանողամետ մշակույթի ձևավորումը,
- դասավանդող մասնագիտական առարկաների ուղղվածությունը և թիրախավորված կոնկրետ թեմաների ընտրությունը,
- ուսանողների կրթական կարիքների բացահայտումը,
- ապագա մանկավարժների մտավոր, հուզական, անհատական և ստեղծագործական զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Լ. Ֆ., Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր, N 7 2012թ.:
2. Ամիրջանյան Յու.Ա.,Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն ուսումնականձեռնարկ, Մանկավարժ 2005թ.:
3. Աստվածատրյան Մ., Ավագյան Մ., Թերզյան Գ., Մանկավարժական կրթությանմասնագիտական զարգացման հայեցակարգը, - Երևան 2014թ.:
4. Գևորգյան Ս., Հակոբյան Ն., Սարատիկյան Լ., Հովհաննիսյան Ա., Հոգեբանամանկավարժական բառարան,- Երևան2014թ.:
5. Զաքարյան Ս. Ա., Փիլիսոփայության պատմություն, - Երևան 2005թ.:
6. Թոփուզյան Ա. Օ., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրըմանկավարժության մեջ,- Երևան 2009թ.:
7. Հակոբյան Ն., Գևորգյան Ս., Հովհաննիսյան Ա., Դավթյան Ա., Մանկավարժականհաղորդակցում,Ուսումնամեթոդականձեռնարկ, Հեղինակայինհրատարակություն,- Երևան 2009թ.:
8. Հակոբյան Ս., Զոհրաբյան Ա., Պետրոսյան Ս. Ուսուցչի էթիկայի նորմեր, ԵրևանՏիգրան Մեծ 2014թ.:
9. Հովհաննիսյան Հ., Քարամյան Լ., Հանդուրժողականությունը Հայաստանում այսօր, կրոնական հանդուրժողականության հեռանկարները, - Երևան 2012թ.:
10. Մուրադյան Ռ., Դասղեկ, - Երևան 2007թ.:
11. Սիմավորյան Ա., Հովյան Վ., Կրոնական հանդուրժողականությունը արդիհասարակությունում, Գլոբուս Ազգային անվտանգություն 2011 թ.:

12. Վարդումյան Ս. Տ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, քսաներորդդարի մանկավարժական տեսություններ, ձեռնարկ մանկավարժների ուսանողների համար, Նոյյան տապան, -Երևան 2005թ.:
13. Байбаков А.М., Введение в педагогику толерантности: Для педагогов и старшеклассников, Москва 2002 г.
14. Брокгауза и Ефрона Толерантность Малый энциклопедический словарь: в 4 т. СПб.,1907-1909.

15. Сластенин В. А., Исаев И. Ф., Мищенко А. И., Шиянов Е. Н., 3-е изд Педагогика:Учебное пособие для студ. пед. учеб. зав. Москва:Школа-Пресс. 2000г.
16. Кукушкин В.С., Воспитание толерантной личности в поликультурном социуме, Ростов-на-Дону 2012 г.
17. Морозова О. П., Педагогическая толерантность учителя начальных классов,Ярославский педагогический вестник 2013г.
18. ПоляковаИ. Г., Хомяков М.Б., Толерантность в Современной Цивилизации Сборник Методических Материалов, Екатеринбург: Уральский МежрегиональныйИнститут Общественных Наук, 2007г.
19. Семашко М. А., Развитие термина «толерантность» в гуманитарных наукахЭлектронный научно-педагогический журнал, 2007г.
20. Смирнов Л. В. Терпимость или вседозволенность: дополнительность содержания илогики построенияпонятия Одиссей. Человек в истории / Ин-т всеобщей истории, Москва: Наука, 2004г.
21. Степанова Е. А., Проблема толерантности в межконфессиональних отношениях, т.1.Екатеринбург, 2008г.
22. Султанова К.Т, Развитиетолерантности в системе техническогопрофессионального образования как объективная потребность современногообщества, - Вестник 2016г.
23. Толерантное сознание и формирование толерантных отношений (теория ипрактика). Сборник научно-методических статей, Москва 2002г.
24. http://gov.cap.ru/home/76/gorono/2005/school6/tolerant_funkzii.htm
25. https://internat34.edu.27.ru/files/uploads/images/fain/Prilogenie_5.pdf
26. https://nsportal.ru/nachalnaya-shkola/raznoe/2016/03/14/tolerantnost-uchitelya/

27. http: // www.e-osnova.ru/PDF/osnova_11_0_744.pdf

28. https://www.arpue.org/en/home/70-news/164-forum-of-the-association-2016